

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ ԵՒ ԳԵՂԵՑԻԿԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՈՒ ԿԻՆԸ ԳՐՔՈՒՄ

ԼՈՒՍԻՆԷ ՏՈՆՈՑԵԱՆ

Հայ գրականության մէջ քչերին է յաջողուել կնոջական ներաշխարհը համակողմանի քննութեան ենթարկել՝ տարբեր, նաեւ փոխըացնող տեսակիւններով: Շատերն են, իհարկէ՛, փորձել, բայց քչերն են կարողացել ներկայացնել կնոջն ու իր հոգէաշխարհը, քննել նրան իբրեւ ընկերութեան լիարժէք անդամի, իբրեւ մարդու, եւ որ ամենակարեւորն է՝ իբրեւ կնոջ, իբրեւ Գեղեցիկի:

Սիրոյ գեղարուեստական սուր հարցադրումները, որոնք ընդգրկում են նաեւ կնոջ սեռային խնդիրները, յաճախ «խռհեմօրէն» շրջանցուել են ազգային նախապաշարումների, նահապետական ըմբռնումների թելադրութեան պատճառով (Յովհաննէս Թումանեան՝ *Անուշ* (1902), *Մարօ* (1889), յաճախ զուգակցուել ընկերային քննական կերպին (Տիգրան Կամսարական՝ *Վարժապետին Աղջիկը* (1904), Երուսան՝ *Ամիրային Աղջիկը* (1904), Շիրվանզադէ՝ *Պատուի Համար* (1904), յաճախ էլ այն ծածկուել է, խեղդուել ազգային-հայրենասիրական գաղափարների հօր շնչի տակ, ինչպէս Բաֆֆու *Սամուէլ* վէպում (1886), Մուրացանի *Բուզան* դրամայում (1881):

Թերեւս խնդրին աւելի մօտ էին կանգնած Նար-Դոսի վէպերն ու վիպակները՝ *Սպանուած Աղաւնի*, (1898), *Պայքար* (1911), նաեւ Թումանեանի *Անուշը*, որտեղ սիրոյ առաջնայնութիւնը ակնբախ է իբրեւ գաղափար եւ մտադրացում:

Սփիւռքահայ գրող Վազգէն Շուշանեանի (1903-1941) ստեղծագործութեան առանցքը կրին է: Նա եկաւ ապացուցելու, որ կինը սոսկ գաղափարի կամ հարցադրումների գերին չէ: Կինը գեղեցիկն է, մարմինը, նաեւ՝ կիրքը:

Սակայն առաջին հայեացքից հարցադրումը կարող է հնչել որպէս մարտահրաւէր՝ չէ՞ որ նրա հարուստ գրականութեան մեջ միայն կինը չէ՝ այնտեղ ուշադիր աչքը որսում է մի ողջ սերնդի կենսագրութիւն, աւելին՝ նոր միջավայրում, օտարութեան մէջ ազգային արժէքների պաշտպանութեան գերխնդիր: Անշուշտ, դա նոյնքան կարեւոր տեղ է գրաւում գրողի կենսահայեացքում, բայց անփրապահ պէտք է ընդունել Շուշանեանի ստեղծագործութեան գլխաւոր յատկանիշը՝ մարդկային բուռն զգացումների ձեւաւորման, զարգացման հակուածութիւնը: Նրա վիպակներում ակնյայտ է կրքի բախումի, սիրոյ յայտնութեան եւ գեղեցիկի պաշտպանութեան խռլական ձգտումը: Ահա թէ ինչու ամէն ինչից վեր Շուշանեանը մնաց գեղեցիկի եւ երիտասարդութեան երգիչ, սէրը մնաց գեղադիրտական բարձրագոյն նպատակ, կինը՝ հոգէաշխարհի լուսաւոր կենտրոն, ցանկալի, յաճախ նաեւ՝ աննուաճ: Նա գրականութեան նշանաւորութիւնը որսում է անձերի

ճակատագրերում, հոգեբանական նուրբ հանգույցներում: Շուշանեանը կարողանում է իր ապրումը, յոյզը, ցաւն ու ներշնչանքն արտայայտել մարդկային ճակատագրերի համախորքում:

Շուշանեանը թողել է գրական մեծ ժառանգութիւն. դրանց մի մասը տպագրուած են, մի մասն էլ անտիպ: Հայաստանում Շուշանեան հրատարակուած է դեռ 1960ականներէից, թէեւ՝ անկանոն ընտրութեամբ: Հարկ է ընդգծել 2010ին Երեւանում լոյս տեսած *Ընտրանքն*, որտեղ ընդգրկուած հինգ ծրագրային երկերից չորսն առաջին անգամ են հասնում հայրենի ընթերցողին:

Մեր քննութեան կենտրոնում Երեւանում Շուշանեանի հրատարակուած գործերից *Բանաստեղծն Ու Կինը*¹ հատորն է:

Այն կազմուած է ներքին միասնութեամբ յատկանշուած չորս գործերից: Իբրեւ առաջաբան՝ խմբագրի նախընտրութեամբ ընտրուած է գրողի «Ալեկոծ Տարինեյ» գործի 29րդ գլուխը կազմող «Գրգռութեան Կարմիր Լաթը» յօդուածը², որին յաջորդում են «Բանաստեղծն Ու Կինը», «Մարմին Մեղապարտ» եւ վաղ տարիքում գրած՝ «Արծաթեայ Գիշեր» ստեղծագործութիւնները: Հատորը կազմող գործերն ընտրուել են ըստ բովանդակութեան, սիրոյ եւ սեռի յարատեւ խնդրի քննութեան թելադրութեամբ: Գրականագիտութեան մէջ քանիցս ընդգծուած է, որ Շուշանեանը «հայ գրականութեան լաւագոյն սիրերգակներէից»³ է: Նրա ստեղծագործութիւններն առանձնանում են իրենց խոր քնարականութեամբ, ապրումի պոռթկումով, ներքին ջերմութեամբ, գեղեցիկի գնահատութեամբ, համարձակ գաղափարներով, հարուստ բառապաշարով: Մի առիթով հայրենի գրականագէտ Վազգէն Գաբրիէլեանը գրել է. «Սիրոյ խոհն ու փիլիսոփայութիւնը, սիրոյ պատճառած տառապանքներն ու հիւսկանքները, յուզումներն ու զանազան ապրումները, մարմնական ու «կեղծ» սէրերի դէմ՝ աստուածային ու «հեթանոս» սիրոյ որոնման, երազի ձգտումները Շուշանեանը դրել է արծակ ու չափածոյ քաղմաթիւ ստեղծագործութիւնների հիմքում»⁴:

Բանաստեղծն Ու Կինը հատորը տպագրութեան պատրաստած բանասէր Նայիրա Յարութիւնեանը յուշում է, որ այդ յօդուածը նախապէս գրուել է ի պաշտպանութիւն Հրաչ Զարդարեանի (1897-1986) *Մեր Կեանքը* (1934) վէպի:

«Գրգռութեան Կարմիր Լաթը» յօդուածում Շուշանեան մտորում է սեռի եւ սիրոյ, բարոյականի խնդիրների շուրջ: Այստեղ նա խօսում է գեղեցիկի, իսկական արուեստի, գրականութեան, բանաստեղծութեան եւ իրական բարոյական չափանիշների իր ըմբռնումների մասին:

Շուշանեանը համարձակօրէն է քննել միւսներին «վրանբաց» թուացող խնդիրները՝ առանց վարանելու բարձրացնելով «ապրիօք պոռնկագի»⁵ է արունեստագէտը»⁶ հարցը, անմիջապէս մատնանշելով, որ սրանք միմեանց հետ առնչութիւն չունեն: Ձի կարող արուեստագէտը պոռնկագիր լինել, երբ խօսում է մարդու նուիրական զգացումներից, հոգու կրակներից: Այս կենսադաշտը մարդուն է ու արուեստագէտին, բանաստեղծին: Ինչպէս վկայում է Գաբրիէլեանը, Շուշանեանը յաճախ է քննադատուել բաց նկա-

բազրութիւնների համար. «Գիշտ է, այդպիսի էջեր կան նրա գործերում, սակայն ճշմարտութիւնն այն է, որ արտաքին այդ նկարագրութիւնները կեղեւն են տոսկ, իսկ տօթիւնը, խորքը մաքուր ու անկաշկանդ սէրն է, աշխարհի ապականութիւնից խուսափելու բոլոր ձգտումը, կեանքի այլանդակութիւնները մոռանալու ջերմ փափագը»⁷:

Մեր կարծիքով, սակայն, խնդիրը բոլորովին էլ այն չէ, որ երբեմն կերպարն առաւել թանձրացնելու, խտացնելու, կամ տեսարանն աւելի ազդեցիկ դարձնելու համար հեղինակը դիմում է նման այլ՝ «...պոռնկագիր է այն, որ գրիչ կը վերցնէ՝ նիւթական կամ այլ վարձատրութեանց փոխարէն, գրգռելու համար սուտ-մաքրակրօնի աղտեղի հաճոյքը: Պոռնկագրութիւնը մտադրութեան մէջ է, յետին մտքին»⁸: Հեղինակը մարտնչում է ի շահ գեղեցիկի, կրքի պաշտպանութեան:

Ճշմարիտ արուեստագէտը, ըստ նրա, պէտք է ազատագրուած լինի բոլոր տեսակի կապանքներից, հրաժարուած՝ բոլոր կաղապարներից: Նա ի վիճակի պիտի լինի խօսելու այն ամէնից, ինչ յուզում է իրեն ու մարդկութեանը: Ինչպէս ընդունուած է նաեւ հոգեբանութեան մէջ, մարդուն ներսից կեղեքող խնդիրները պահանջում են դուրսբերում, որպէսզի դրանք ապրուեն, յաղթահարուեն, ամբողջանան: Շուշանեանը պատկերաւոր է ներկայացնում այս տեսակէտը. «Ժնչպէս մէզն ու քրտինքը, որ մեր մարմինը կ'ազատեն անելոյդ ու վնասակար տարրերէ, այդպէս այ բառը խողովակ կը ծառայէ հոս մաքրելու համար կեանքը իր աղտեղութենէն ու թոյներէն: Վերքը կարելի է բուժել՝ դուրս ցայտեցնելով թարախը, ազատելով արիւնը վարակումէ ու մեխումէ, գտելով զայն»⁹: Ներսում հաւաքուած թոյնն է, որ մեզ այդքան հեռացնում է իրական արժէքներից, գեղեցիկից ու մարդկայինից: Նրանից վայրկեան առաջ պիտի ազատուել:

Զկայ մի «տարածք», երբեւէ մարդուն յուզած, էակին վերաբերող, ուր արուեստագէտը, բանաստեղծն իրաւունք չունենայ մտնել ու քննել, որովհետեւ արուեստը, գրականութիւնը մարդու հոգու փիլիսոփայութիւնն են, մարդու հոգէաշխարհի արտայայտումն ու սրատես աչքը: Կարծում ենք, նաեւ սրանով է պայմանաւորուած գրականութեան ինքնամաքրման ու գտելու հզօր դերակատարութիւնը: Այն, ինչի մասին հասարակ մահկանացուն մտածելն անգամ համարում է «մեղք», արուեստագէտի համար չբարձրաձայնելն է «մեղք», այս մասին խօսելուց վախենալը: «Մարդկային կեանքին մթին կալուածներուն մէջ՝ չկայ հողի պատառ մը, որ օտար ըլլայ գրականութեան: Ու էն այլանդակ, էն եպերելի, էն արգիլուած երեւոյթին վրայ իսկ արուեստագէտը իրաւունք ունի իր լուսարձակը պտտելու»¹⁰:

Գրականագիտութեան մէջ իշխում է այն տեսակէտը, որ Շուշանեանը սիրոյ ու երիտասարդութեան երգիչն է: Յիբաւի, նրա գործերում կան սիրոյ սահմանումներ, որոնցով, անկասկած, հարստանում են գրական ներքին շերտերը. «Չեմ գիտեր թէ սէրը ի՞նչպէս քնակութիւն կը հաստատէ ու ի՞նչ մարդոց սրտերում մէջ, ո՞րկէ կու գայ: Կու գայ համդարտօրէն ու հանդիսատրապէս, քայլ առ քայլ ու հետզհետէ ողողելով շրջակայքը իր

անոյշ լոյսովը թէ յեղակարծ երանութեան մը պէս, որ գիշերներով թեզ զարթուն պահելէ վերջ, ցրտին գիշերամուտի մը դուռը կը զարնէ»¹¹։

Սփիւռքահայ գրող Մուշեղ Իշխանն իր «Մէրը Վ. Շուշանեանի Գրականութեան Մէջ» (1983) յօդուածում դիպուկ բնութագրել է նրա ստեղծագործութիւնը ռոմանտիկական ընկալման դիրքերից. «Գերզգայուն այս գրողը կեանքին կէտը ապրեցաւ կարծես սիրոյ ընկալումին հասունացումն համար, միւս կէտն ալ՝ զայն որոնելու, գտնելու եւ անոր տիրապետելու համար»¹²։

Արուեստագէտը Գեղեցիկն իր աշխարհայեացքում պիտի որսայ, պիտի դրան տիրի, պիտի սանձել կարողանայ, որպէսզի իր գործերը մարդկութեանը հետաքրքրեն որպէս արժէք, որպէս երեւոյթ, հակառակ դէպքում՝ դրանք կը լինեն սոսկ միջակութիւններ։ Շուշանեանը բարձր գտնուելով՝ գեղեցիկը կրեց իր մէջ, կարողացաւ իրենը դարձնել, ունենալ վայելել այն։

«Գրգռութեան Կարմիր Լաթը» յօդուածը Շուշանեանին մշտապէս յուզած հարցերի ներքին շերտերում է։ Նա խօսում է գեղեցիկի ընկալման իր տեսակէտների մասին։ Յօդուածը «տեղում է» իր նշանակութեամբ. այն կարծես միւս երեք գործերի զաղափարների, հայեացքների գերխտացումը լինի, որն իր մէջ ամփոփում է այն բոլոր հարցադրումների պատասխանները, որոնք յետոյ բացուելու են յաջորդ ստեղծագործութիւններում։

Նախ ընդունենք, որ Շուշանեանի գեղարուեստական աշխարհն առանձնանում է խոր քնարականութեամբ։ Կարելի է անմիջապէս նկատել նրա դրական յատկանշական կողմերից ամէնից ակնառուն՝ բանաստեղծական շուշը։ Այս մասին վկայում է սփիւռքահայ ժամանակակից գրող Նուբար Զարիստեանը «...պէտք է ընդունիլ, որ Շուշանեանի արծակը անելի արտայայտիչ եւ անելի բանաստեղծական է, քան իր բանաստեղծութիւնը»¹³։

Շուշանեանը, մեր կարծիքով, հայ արձակի մէջ ամենարանաստեղծական դէմքն է, թէեւ նա գրել է գերազանցապէս արձակ, եթէ չհաշուենք վաղ շրջանի մի քանի չափածոյ գործերը եւ, անշուշտ, «Երկիր Յիշատակաց» (1927) պոէմը, որը տպագրուել է գրուելուց գրեթէ 40 տարի անց Երեւանում 1966ին, համանուն ժողովածուում։

Գալով *Բանաստեղծն Ու Կիրն* երկին, այն կարծես անյանգ բանաստեղծութիւն լինի։ Այն որոշ իմաստով, հեռացել է դասական պատմութեան, վիպակին բնորոշ կառուցուածքից։ Ընթերցողը յուզականութեամբ հետեւում է գրողի մտքի ընթացքին, տրամադրութեան վերելքներին ու վայրէջքներին։ Եւ դա գործնական նպատակ է Շուշանեանի համար։ Ստեղծագործութեան սիւժէն յախուռն է, նոյնիսկ, դրական իմաստով, մի տեսակ ցաքուցրիւ, իր իսկ բառով՝ «ցանուցիր»։ Գերակշռում են հարուստ տեսարանները, որտեղ առանձնանում է երկու կնոջ վառ կերպար։ Մէկը օտար հրապոյրն է՝ Լիւսէթը՝ փարիզուհի, միւսը՝ հայրազատ Շաքն՝ արեւելքի։

Լիւսէթը ներկան է՝ համարձակ, բռնկուն, միշտ հաճոյքի ծարաւ. «Լոկ վառաշ ու անյագ էզ մըն ես, կ'ըսէի մօրիմ ծայնով մը...»¹⁴։ Իրրեւ հմուտ գեղագէտ՝ Շուշանեանը ճանաչողական խնդիր է դնում իր առջեւ. բացարձակ

գեղեցիկը յայտնագործել կնոջ մարմնի մէջ, բայց՝ հոգու որոնումի շարունակական թելադրութեամբ: Սրանք երբեք չի առանձնացնում, կնոջը դիտում է միջնադարեան բանաստեղծութեան ոգով՝ իրբեւ հոգի ու մարմին, կրթի եւ սիրոյ ամբողջութիւն:

Շաբէն եւս խորհրդանշական կերպար է, մարմնաւորում է Արեւելքը: Արտաքնապէս խաղաղ է, անվրդով, սակայն կին երեւոյթի պէս բաց է սիրոյ, սեռի առաջ՝ Նա ունի պարզ կնոջական ցանկութիւններ. ուզում է սիրել ու մանաւանդ՝ սիրուել: Նա հրաշալի գիտի, որ այն տղան, որի հանդէպ ինքը ներքին մղումներ ունի, իր լաւագոյն ընկերուհու սրեցեալն է: Այս պարագայում, սակայն, սեռի ձայնն առաւել բարձր է հնչում. «...վայրկեան մը յետոյ իւրթեամբ կը վերադառնայ ու կը կծկուի մարմնիս: ...Կը զգամ մարմինը, որ կը խլրտի սիրով, բազուկներուս մէջ կը գրկեմ զայն...»¹⁵:

Այս խնդրին զուգահեռ հայուհին բերում է ազգային յուզական երակ՝ հեղինակին կապելով յիշողութիւնների, կորսուած հայրենիքի, մօր, քրոջ յիշատակների հետ, որոնք «... վրաս կը թափին ծիւնի ուրախ փաթիլներու պէս...»¹⁶: Անցեալը, զգայութիւնները մշտապէս Շուշանեանին տարել են մանկութեան մաքուր ու խաղաղ հանգրուան: Նա այս մասին խօսելիս երբեք էլ չի թաքցրել սրտի խալտանքը: Նրա համար մանկութեան վառ յիշողութիւնները դարձել են մշտնջենական կէտ՝ ներկայ օրերի համատարած աղտեղութեան մէջ: Պատահական չէ Մ. Իշխանի հետեւեալ մտորումը. «Երկու մարդ կայ Շուշանեանի մէջ, մէկը՝ որը մնացած մնաւոր, որ կեանքի դաժան ճամբաներուն վրայ թափառիկ՝ ընտանեկան օճախի եւ մայրական գուրգուրանքի կարօտով կը տառապի շարունակ: Միսը՝ սեռային ցանկութիւններով բռնկած երիտասարդ սիրահարը...»¹⁷: Տողերի արանքից երեւում է Շուշանեանի հրճուանքը առ մանկութիւն, առ մայր... «Մէկիկ-մէկիկ յիշատակներ կ'ելլեն, ցնծաղիկներու պէս, ծնրան մոխիրին տակէն: Սիրելի դէմքերու վրայ տարբեր ու անոյշ լոյս մը կը ցոլայ»¹⁸: Եւ ինչպէս տեղին է նկատել Զարխուսեանը, «Շուշանեանը կը մուսգէ երկու լարերու վրայ՝ իրապաշտութեան լարը եւ երեւակայութեան լարը»¹⁹:

Շաբէն անցեալն է, բայց նա է, որ յաղթանակ է տանում Լիւսէթի՝ ներկայի հանդէպ: Լիւսէթը մեծահոգի է, ներող, անձնուէր, նա լաւ գիտի իր տեղը սիրած տղայի կեանքում: Զգում է, որ իր մէջ տանու է տուել կինը, բայց ոչ առաւելական այլ մի կնոջ, այլ նրա մէջ յարատեւող «ազգային» արժէքներին: Շուշանեանի սկզբունքն է սա՝ ոչ մէկը յիշատակի կամ նրա կրողի դիմաց կարող է յաղթանակող դուրս գալ: Լիւսէթը հեռանում է արժանապատուօրէն՝ սիրոյ մեծութիւնը եւ արժէքը բարձր պահած. «Ուզեմ ալ՝ չեմ կրնար ատել քեզ, յարեց շատ մեղմօրէն... Շաքէին ըստ, որ չեմ վշտացած դէմը, զիտեմ որ ինձմէ առաջ կը սիրէր քեզ ու ինձմէ ատելի իրատունք ունէր քեզ սիրելու...»²⁰:

«Մարդը անդունդ մըն է»²¹ բազմիմաստ բանաձեւումով Շուշանեանն իր այս ստեղծագործութեան մէջ վերաբարձում է ռուս գրող Ֆէոդոր Դոստոեւսկու (1821-1881) ներաշխարհի քննութեան փորձը: Այդ անդուն-

դում եռեւեփում են բնազդը, կրքերը, խմացական տարերքը, սէրը առ Աստուած, որից «ծլարձակ» պիտի ծաւալուեն խիղճը, մեղքի ենթագիտակցումը, ինքնամաքրումի պատրաստ պայծառատեսութիւնը։ «Ու զարմանալի չէ, որ պարզամիտներն են լոկ...», որ ամբողջովին կլանուած իրենց տգիտութեամբ ու ցաւով, առիթ ու ժամանակ չունին չափելու այդ անդունդը»²²։

Անդունդի ներքին շերտերում Հոգեկանը տարանջատուած է, մարմնի մէջ գոյացնում է վիճ, որը երբեք չի լցւում։ Հոգու եւ մարմնի հակադրական խորքերում, անդունդի անտեսանելի չրջադարձերում է ձեւում դաշնութեան, գեղեցիկի ըմբռնումը, որոնց բարձրագոյն աստիճանը վեհի ու անանձնականի սահմանն է։ Այսուհանդերձ, «Անխառն հրճուամբ չկայ երկրի վրայ ու մարդը անդունդ մըն է»²³։ Եւ Շուշանեանը յուսահատ նկատում է. «Կեանքս դաժան կոխ մըն է՝ արտաքին եղելութիւններուն, օրէնքին եւ բնութեան տարերքին դէմ։ Խզումը ներքին աշխարհիս եւ արտաքին իրողութեան միջեւ հետզհետէ կը վերածուի անանցանելի խրամատի մը»²⁴։

Այստեղ է տառապանքի մեծութիւնը։

Շուշանեանը գրական զեզերումների մէջ այդպէս էլ չգտաւ «յաւիտենական կին»²⁵ խորհուրդը։ «Ան ճանչցաւ դիւրամատչելի կիներ, պերճադիճներ, պահանջկոտ կիներ, անմերձեցալիներ՝ առանց սակայն կարեւոր գոհացնելու իր հոգիին ձգտումները»²⁶։ Կնոջ կատարելութիւնը եւ անկատար աշխարհը հակադիր բեւեռներ են։ Գրողը անընդհատ որոնումների մէջ է՝ անցեալի գիրգ յիշողութիւններում, ներկայի ցոփ ու գունագեղ օրերում, ինչու չէ՞ նաեւ ապագայում։ Սակայն, ապարդիւն, նոյնիսկ նուրբ մարմնով ու հոգով փարիզուհին՝ Լիւսէթն էր նկատել. «Գիտեմ, որ միշտ չպիտի սիրես զիս... այն մարդոցմէ չես, որ մէկ սիրով կը գոհանան։ Բոլոր ըսածներդ չեմ հասկնար, բայց կը զգամ որ զիս չէ, որ կը սիրես, այլ կիներ...»²⁷։

Շուշանեանը յաճախ է իր ստեղծագործութիւններում անդրադառնում երազին, երեւակայական տիրոջթին։ Այս դաշտում նա լիակատար ազատ է, կարող է անյազօրէն խօսել իր խոհերի, մտատանջութիւնների, ցանկութիւնների մասին։ Երազում, այսինքն՝ ենթագիտակցական աշխարհում, ամէն ինչ այլ է. այստեղ են մանկութիւնը, երիտասարդութիւնը, ապագան, զգայութիւնները՝ հաճելին, տխրութիւնը, ատելութիւնը, կիրքը։ Եւ այս ամէնը՝ կողք-կողքի։ Արուեստագէտն է միայն, որ կարողանում է դրանք ներքնապէս դասդասել, համադրել, եզրայանգումների գալ։

Կնոջ ներաշխարհի գիտակ Շուշանեանի փնտռածը միայն սեռը չէր. «Յանկութիւնս, երկրէն աքսորեալ մէկուն պէս, պիտի դեզերի բոլոր կիներուն շուրջ ու ամէն տեղ հոգիս անհանգիստ պիտի ըլլայ։ Երբեք որեւէ երդիքի տակ լրիւ անդորրութիւնը չպիտի դիմադրէ զիս ու երկրի բոլոր աղօքիկներէն ո՛չ մէկը կեանքի ընկերս ու կիցս պիտի ըլլայ»²⁸։ Գեղագէտ Շուշանեանը խնդիր ունէր իր գորշ ու միապաղաղ, դժուարին ու անակնկալ ցնցումներով լեցուն կեանքում որոնելու այն լոյսը, բարին ու ներդաշնակը, որը մէկ բանաձեւումով կարելի է բնորոշել՝ Գեղեցիկ։ Նրա ստեղծագործութիւնները լի են անսահման բարութեամբ, կարօտով ու սիրով։

Շուշանեանի *Բանաստեղծն Ու կիներ* սուր զգացականութեամբ օժտուած գիրքը աչքի է ընկնում իր ոճային խորքով, ենթիմաստներով, համարձակ բանաձեւումներով, պերճութեամբ. «Եւ այս բոլորը՝ գրուած քիմք ու հարուստ լեզուով եւ ոճով մը, որ իր ելեւելումներով, այլազանութեամբ եւ բոնով կը յատկանշէ Շուշանեանի արուեստը եւ ինքնատպօրինը»²⁹։ Այս առումով իմաստալից է գրականագէտ Սուրէն Դանիէլեանի մատրուար. «Գրողի լինելութեան նախապայմանը Վ. Շուշանեանի հրաշալի լեզուն է՝ նուիրումի ու ճանաչումի լիապարար պարտեզը՝ ի՞նչ խորունկ քրքիռներ, ի՞նչ քարծր տիրապետութիւն։ Այդ լեզուի ընկալութիւնն է, որ հայ արձակում նրան տանում է քնարականութեան, բանաստեղծական ամմատչելի զատիվեր բարձունքի, իրատեսակ մեմաստանի։ Նա դառնում է հայ բանաստեղծական արձակի ամենից փնտռուած իշխանը»³⁰։

Բանաստեղծն Ու կիներ հատորում է տեղ գտել «Մարմին Մեղապարտ» («Անձկութեան Եւ Զարչարանքի Գիշեր Մը») գործը։ Խօսելով Շուշանեանի արձակի ոճային առանձնայատկութիւնների մասին՝ արձակագիր եւ գրականագէտ Գեղամ Սեւանը գրում է. «Միատեսակ են բոլորը՝ միօրինակ շլինելով հանդերձ, եւ իրարանշիւրը մի խոր ապրումի տարբեր հատուածները կարծես լինեն»³¹։ Իսկապէս, Շուշանեանի ստեղծագործութիւնները միօրինակ չեն, քանի որ բացառապէս ինքնակենսագրական ընդլիկ ենթահողով հանդերձ, կարողանում են բարձրանալ ներանձնականից։

Այս գործում չկայ սիւժէ՝ որպէս այդպիսին, ու գրողը կրկին մարմնի եւ հոգու, սեռի եւ սիրոյ յորձանուտում է։ Ինչպէս հեղինակն է յուշում, այս ստեղծագործութիւնը «ախտաճանաչութեան համեստ փորձ մըն է...»³²։ «Մարմին Մեղապարտ»ում Շուշանեանը կարծես քաշում է «փողոցի» սիրոյ վարագոյրները, եւ նախարանում ընդգծում, թէ որտեղից է առաջ եկել այդ սէրը. «Նազովրեցին՝ տառապանքի հասկացողութիւնը քերտ խոնջ ու ծանձրացած հեթանոս հասարակարգին։ Իր առաքելները ուրացան մարմինը որ մեծագոյն հարստութիւնն է այս վաղանցուն ու հողէ աշխարհին մէջ ու սրբազան անօթը մեր հոգիին, (գեղեցիկ քնակավայր)։ Որպէս հետեւանք՝ մարմնական սէրը՝ որ ամենէն առողջ ու ամենէն գեղեցիկ քնագոյն է գուցէ, դարձաւ արգիլուած հաճոյք։ Յետագային ապականեցան մարդիկ»³³։

Շուշանեանից առաջ հեթանոս սէրը դարձաւ Դանիէլ Վարուժանի (*Զպուգբարեան*, 1884-1915) բանաստեղծական այցեքարտը։ Նա մի ամբողջ շարք գրեց՝ բերելով արբէյիւ, համարձակ պատկերներ։ Վարուժանը ծառանում էր նոր շրջանում սիրոյ վաճառքի դէմ. ահա թէ ինչու նրա համար հեթանոս կիրքը, ազատ յարաբերութիւնը մաքրութեան խորհրդանշան էր ներկայ օրերի դիմաց։ Այդ ազատութիւնը, որպէս գեղեցիկ յատկանշական մէկ կողմ, գտնուում է հեթանոս դարերում։ Այնտեղ է կինը յորձանքի մէջ, ինքը՝ յորձանքը, ինքը՝ բնութիւնը։

Մարզն է, որ աւելի ուշ սահմանազատել է հոգին սիրուց, կրքից։ Մարմնական կապն առանց հոգեկանի տիրապետութեան, Շուշանեանը համեմատում է փողոցի անկիւնում զուգակորուող շների կամ կատուների յարաբե-

րութեան³⁴ : Կարեւորելով հոգու եւ մարմնի ներգաշնակութիւնը՝ Շուշան-
եանը գրում է. «Վայրկեաններ կան երբ ինձի կը բռնի թէ մարմնական վա-
յելք բնագոյական ծագում ունի, կը պատկանի մարդ-անասունին ու գո-
հացումէն յետոյ հոգիին կը բերէ անհուն տխրութիւն, բեկում ու ծանծրոյթ :
Մինչդեռ հոգեկան վայելքները մեզ կը տանին ուրախութեան մը որ ան-
խառն է ու կազդուրիչ»³⁵ :

Յաջորդ եւ վերջին գործը, որ տեղ է գտել այս ժողովածուում Շուշան-
եանի վաղ շրջանում գրած գործերից է, որ կոչւում է «Արծաթեայ Գիշեր»
(Երեք վիպական տրամախօսութիւններ) : Այն հետաքրքրական է իր մա-
տուցման եղանակով, գաղափարի փնտռտուքով եւ լուծումներով : Այն տե-
սարանի որոշ գերակայութեամբ մօտենում է թատերախաղի :

Զրուցում են երկու երիտասարդ, որոնցից մէկին հեղինակն անուա-
նում է «Գուռնատ», երկրորդին՝ «Միւս»՝ անհրաժեշտութիւն չտեսնելով
նրանց անունները մատնանշելու : «Գուռնատ» կոչելով՝ Շուշանեանը ցանկա-
նում է ընդգծել նրա՝ անգոյն, առանց հրապուրի ապրելակերպը : Գուռնատ
տղան մարմնաւորում է մի տեսակ եթերային, ոչ-առօրէական բանաստեղ-
ծին, որն ապրում է երկնային հովերով : Մինչդեռ Միւսը առօրեայ կեանքով
ապրող, դժուարութիւնների դէմ մաքառող, կեանքը տեսած մարդուն է
կերպաւորում :

Նրանց երկխօսութիւնը վիճարանութիւն չէ. նրանք ընթերցողի սեղա-
նին դնում են տեսակէտներ աշխարհի, մարդու, կեանքի, սիրոյ եւ սեռի մա-
սին : Եւ որ ամէնից հետաքրքիրն է՝ նրանց տեսակէտները չեն բախուում, այլ
զուգահեռ ընթացք ունեն : Հիմնովին տարբեր է գեղեցիկի նրանց ընկալու-
մը :

Գուռնատն առանձնանում է ծայրայեղ գնահատութեամբ՝ մերժելով
մարմնականը սիրոյ մէջ, պաշտպանելով հոգեկանի, պլատոնականի առաջ-
նայնութիւնը, դաւանում բարձր արժէքներ, մերժում յետնախորշային,
բնագոյային կապերը. «Կ'ատեմ երկրի հրճուանքները, որ ծագումով
անասնական են ու գռնիկ՝ իրենց արտայայտութեան եղանակով»³⁶ :

Ստեղծագործութեան գաղափարական շեշտադրութիւնները յանգում
են Դոստոեւսկուց բխող անդունդի խորհրդին : Անտեսանելի եւ տեսանելի է
պայքարը արուեստի եւ առօրեայի միջեւ : Տեսանելի՝ տառապող մտաւորա-
կանի համար :

Ըստ Գուռնատի՝ ամէն բան գեղեցիկ է, առեղծուածային, երբ կան խորք,
ենթիմաստ, ծածուկ ենթաշերտեր. «...Ինչ որ գիտ կը հրապուրէ ան-
միւրակամ գեղեցկութիւնը է, իրերուն գաղտնի երաժշտութիւնը»³⁷ : Նա ա-
նողոքարար մերժում է հեթանոսութիւնը՝ այն համարելով «մերկ, արիւ-
նարբու, վայրի» պաշտամունք. «Միշտ մերժած եմ հեթանոսութիւնը, որ
կեանքի ըմբռնումներուն է՛մ թանձրացեալն է : ...Կրօնը հոգեկան սլացք
է, մինչդեռ հեթանոսութիւնը ամէն յուզում ու ըմբայաբերում կը վերածէ
մարմնական վայելքի : Լոկ մշուշն ու խորիւրդը գեղեցիկ են : Հեթանոսու-
թիւնը մերկ է...»³⁸ :

Եթէ Գուճատն ըմբոստ է, բռնկուն, պոռթկումների սիրահար, ապա Միւսը խաղաղ է, հաւասարակշիւ: Նա ձգտում է ընկերոջը «երկնային ու լուսնային ինքնին» ու վկայել, թէ ապրել միայն վիպային պատրանքով, հնարաւոր չէ: «...լոկ երազի մամանան յի քաւեր կերակրելու այս զմայելի մարմինը»³⁹: Այստեղ նրա վրայ ներգործուն է Անդրէ Ժիդի *Երկնային Մեռեալները* (*Nourritures Terrestres*) (1897) վէպի հմայքը, որի թարգմանութիւնը հայ գրողի համար իւրատեսակ բաղձանք էր, որին ինչ-որ ժամանակ նա լծուել էր: Միւսի մտածողութիւնն աւելի գործնական բնոյթ ունի: Իրական են մղումները: Նա հրաշալի գիտակցում է, որ «...մաքուր ոչինչ կայ երկրի վրայ, քանի որ կեանքին օրէնքը հաստատուած է հակասութեան դէպի տրամաբանութիւն, ցաւն դէպի հաճոյք, տաժանքն դէպի դիւրակեցութիւն փորձուած ճիգին վրայ»⁴⁰:

Ստեղծագործութեան հանդուցակէտում Գուճատ տղայի եւ Միւսի խոհերը, ի վերջոյ, համադրուում են, աւելին՝ փոխըացնում իրար: Գուճատի մտորումների մէջ աստիճանաբար բուն դրած երկուութիւնը ստեղծում է նեղ իրավիճակ, ինչ-որ տեղ բերում «մեղքի» իւրովի զգացում: Այդ «անցուկ» հերոսը համարում է բարոյական անկումի տրամադրութիւն. «Կ'ընթրոնեմ թէ ո՞րքան դիւրին է երազէն դէպի գիշութիւն վայրահակ անկումը»⁴¹:

Այստեղ օգնութեան է գալիս Միւսը՝ ազատելով ընկերոջը նման մտածանքութիւնից. «Որեւէ հաճոյք վերարտադրելու ամեն ճիգ գիշութիւն է: Ու մարդը մեղաւոր է, ի սկզբանէ, քանի որ մեր մայրերը մեղանշելով կը յղանան մեզ: Ապրիլ կը նշանակէ ապականիլ, կորսնցնել աստիճանաբար զգայարաններու առաջին զուարթութիւնը»⁴²:

Գուճատ տղան եւ Միւսը Շուշանեանի երկու ես-երն են՝ Մարգը եւ Արուեստազէտը: Հետաքրքականն այն է, որ նրանք թէեւ բանավիճում են, սակայն ներքին միասնութեան մէջ են: Եւ կարելի է հետեւութիւն անել, որ Շուշանեանն այս պարագայում չունի կարծրատիպեր. նա միեւնոյն երեւոյթը կարող է եւ քննադատական, եւ պաշտպանական տեսանկիւնից դիտել:

Գուճատ տղան սեռի դրսեւորումների բարդոյթ ունի. զգում է, ապրում անորոշ ցանկութիւններ. «...Կ'ուզէի գովելով խօսիլ՝ մակընթաց ցանկութեան մասին, բայց քերանս կ'անշնայ քառերէն: Կը զգամ աչքերուս կրակը, շրթունքներուս դողն ու երակներուս սարսուռը»⁴³: Վերջում, իհարկէ, Գուճատ տղայի մէջ յաղթում է զգացումի ուժգնութիւնը. «Հեշտութեան կը խանձիմ ու կ'ուզեմ քաժակս փշրել աղուոր պորտիդ վրայ: Օ՛, լուսաւոր, հրաշագեղ, բացառիկ սիրոյ գիշեր, ո՞ղոյն քեզ...»⁴⁴:

Այսքանից յետոյ հնչում է մահերգը, մեռում է «անգոյն» կեանքով ապրող գուճատ տղան. «Գուճատ տղուն աչքերուն խորը կը ծուարի մահուան ծարաւը: Յուսահատութիւնը զարկած է գայն: Ատուուան հովը մերկ ծառերուն մէջ կը սուլէ: Գուցէ մահերգ մը»⁴⁵, ճիշտ եւ ճիշտ ինչպէս Մահուան Առաջաստու՛մ:

Գուցէ տղան այլեւս գուճատ չէ...

Այս հատորի լույսընծայումը նպատակ ունի ր առաւել խորքով ընկալելու Շուշանեան արուեստագէտի ըմբռնումներն ու դիրքորոշումները։ Շուշանեանն այն հեղինակներից է, որոնք կարողանում են ասելիքը հմտօրէն ուղղել տողերի արանքից։ Նա յոյզ է բերում ընթերցողին, տանում զգացմունքի եւ զգայութեան մաքրութեան, բացայայտում ներաշխարհի գոյներ։

Վազգէն Շուշանեանը դարձաւ սփիւռքահայ գրականութեան մէջ փոթորկոտ ու յախուռն կրքի երգիչ։ Նա իր քնարական արձակով հիւսեց նաեւ կարօտի ու հայրենասիրութեան երգը։ Իր ստեղծագործական էջերով, օրագրութիւններով, նամակներով կարողացաւ կերտել ապրելու, սիրելու տենդով բռնուած երիտասարդ, ուժեղ անհատի կերպարը։ Շուշանեանը մնաց կեանքի անուղղայ սիրահար։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վազգէն Շուշանեան, *Բանաստեղծն Ու Կինը*, խմբ. Գուրգէն Գառպարեան, Երեւան, «Նայիրի», 2005։

² Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 226։

³ Գեղամ Սեւան, *Վազգէն Շուշանեան (Կեանքն Ու Ստեղծագործութիւնը)*, Երեւան, ԳԱԱ Հրատ., 1988, էջ 14։

⁴ Վազգէն Գաբրիէլեան, *Սփիւռքահայ Գրականութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2008, էջ 232։

⁵ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 226։

⁶ Նոյն, էջ 5։

⁷ Գաբրիէլեան, էջ 232։

⁸ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 6։

⁹ Նոյն, էջ 8։

¹⁰ Նոյն։

¹¹ Նոյն, էջ 11։

¹² Մուշեղ Իշխան, *Երկեր*, Երեւան, «Նայիրի», 1990, էջ 570։

¹³ Նուպար Զարխուտեան, «Բանաստեղծը Եւ Կինը», *Բազին*, ԻԲ. տարի, թիւ 1, Եռուար 1983, էջ 87։

¹⁴ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 54։

¹⁵ Նոյն, էջ 84։

¹⁶ Նոյն, էջ 73։

¹⁷ Մուշեղ Իշխան, *Երկեր*, էջ 569։

¹⁸ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 72։

¹⁹ Նուպար Զարխուտեան, «Բանաստեղծը Եւ Կինը», *Բազին*, Եռուար 1983, թիւ 1, էջ 91։

²⁰ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 115։

²¹ Նոյն, էջ 55։

²² Նոյն։

²³ Նոյն, էջ 108։

²⁴ Նոյն, էջ 95։

²⁵ Նոյն, էջ 72։

²⁶ Զարխուտեան, էջ 89։

²⁷ Շուշանեան, *Բանաստեղծն*, էջ 71։

²⁸ Նոյն, էջ 72։

²⁹ Զարխուտեան, էջ 91։

- ³⁰ Վազգէն Շուշանեան, *Ընտրանի, Երեւան*, 2010, էջ 11 (տե՛ս՝ Սուրէն Դանիէլեանի «Վազգէն Շուշանեանի Գրական Ճակատագրի Առջեւ» առաջաբանը)։
- ³¹ Գեղամ Սեւան, Վազգէն Շուշանեան, էջ 17։
- ³² Շուշանեան, *Բանաստեղծներ*, էջ 119։
- ³³ Նոյն։
- ³⁴ Նոյն, էջ 147։
- ³⁵ Նոյն։
- ³⁶ Նոյն, էջ 174։
- ³⁷ Նոյն, էջ 175։
- ³⁸ Նոյն, էջ 177։
- ³⁹ Նոյն, էջ 185։
- ⁴⁰ Նոյն, էջ 187։
- ⁴¹ Նոյն, էջ 192։
- ⁴² Նոյն։
- ⁴³ Նոյն, էջ 212։
- ⁴⁴ Նոյն, էջ 219։
- ⁴⁵ Նոյն։

THE AUTHOR AND THE PERCEPTION OF BEAUTY IN
VAZKEN SHUSHANIAN'S BOOK,
PANASDEGHDZN OO GINE (THE POET AND THE WOMAN)
(Summary)

Lusine Tonoyan

Not all the writings of the Diaspora Armenian author Vazken Shushanian have been published. Except for his early poems and “Yerkir Hishatakats” (country of memories), Shushanian has mostly written in prose, with some writings published in Armenia and others in the Diaspora.

The article highlights Shushanian’s book, *Panasdeghdzn Oo Gine* (the poet and the woman), published in 2005 in Yerevan, which sheds light on Shushanian’s aesthetic views. Shushanian’s very indicative and meaningful article “Kerkrutian Garmir Late” (the red fabric of provocation) is put as the introductory chapter of the book.

Shushanian holds a unique place among the *avant-garde* authors of the Armenian Diaspora. He highlights the refined/delicate facets of the woman’s inner world in a very skillful and masterly manner. Shushanian perceives the woman as a mother, a female and most importantly as a sacrament of harmony and beauty.

